# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<10>> ---------հուլիսի------------2026թ. N ՄՊ/ 411 -Ա

ք. Արմավիր

### «ՋԱՐԹՈՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Նարեկ Մելքոնյանի 2026 թվականի հուլիսի 9-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Ջարթոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարեկ Մելքոնյանին տրամադրել 2026-2027 թվականների ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2026 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 17-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:

2. Նարեկ Մելքոնյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ջարթոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Ջարթոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ռիմա Աբովյանին:

3. «Ջարթոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ռիմա Աբովյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 14-

ից օգոստոսի 17-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Նարեկ Մելքոնյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 18-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Подписано: GRIGORYAN ARAM 25097.20082 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ